

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 1119-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1119-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 13-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է .

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողներին դրամական օգնություններ տալու կարգը, չափերը և պայմանները սահմանելու մասին» N 1119-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման նախաբանում «Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 12-րդ մասերի» բառերը փոխարինել «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 8-րդ և 13-րդ մասերով» բառերով,

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված հավելված N 1-ի՝

ա. 3-րդ կետում «զինծառայողին» բառից առաջ լրացնել «շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմի» բառերը.

բ. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Դրամական օգնության իրավունք տվող հիմքով նախկինում զինվորական ծառայությունից արձակված, սակայն դրամական օգնություն չստացած և հետագայում օրենքով սահմանված կարգով կրկին զինվորական ծառայության անցած զինծառայողներին հերթական անգամ դրամական օգնության իրավունք տվող հիմքով զինվորական ծառայությունից արձակելիս նախկին զինվորական ծառայության ժամանակահատվածի համար դրամական օգնությունը հաշվարկվում է նախկին արձակման օրվա դրությամբ ունեցած զինվորական ծառայության ստաժի համար տվյալ օրվա դրությամբ գործող օրենքով սահմանված չափերին և պայմաններին համապատասխան:>>.

3) որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետով սահմանված հավելված N 8-ի`

ա. 3-րդ կետում լրացնել նոր նախադասություն` հետևյալ բովանդակությամբ.

<<Ռազմաուսումնական հաստատություններն ավարտելուց հետո զինծառայողին (քրեակատարողական ծառայողին և փրկարար ծառայության ծառայողին) պաշտոնի նշանակելու դեպքում դրամական օգնությունը հաշվարկվում ու վճարվում է սույն կարգի 2-րդ կետի համաձայն` հիմք ընդունելով նրա մշտական բնակության վայրի և նոր ծառայության վայրի միջև հեռավորությունը:>>.

բ. 5-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությունում <> թիվը փոխարինել <> թվով,

4) որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետով սահմանված հավելված N 9-ում`

ա. 1-ին կետում <<Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածի 8-րդ մասի>> բառերը փոխարինել <<Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 9-րդ մասի>> բառերով,

բ. 3-րդ կետի 3-րդ ենթակետում <<ընդհանուր>> բառը փոխարինել <<անընդմեջ>> բառով, իսկ <<(ծնողների համար նշելով համատեղ բնակվելու փաստը)>> բառերը հանել,

գ. 3-րդ կետի 4-րդ ենթակետում <<իսկ զինծառայողի (քրեակատարողական ծառայողի և փրկարար ծառայության ծառայողի) ծնողի մահվան դեպքում` նաև մինչև մահանալը համատեղ բնակվելու մասին տեղեկանքը` տրված բնակչության պետական ռեգիստրի համապատասխան տեղական բաժանմունքի կողմից>> բառերը հանել,

դ. ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: